

Արձանագրություն N5

Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի

05.12.2014թ. նիստի

Օրակարգ

1. Ասպիրանտների և հայցորդների ատեստավորում:
2. 2014-2015 ուս. տարվա 1-ին կիսամյակի առկա և հեռակա ուսուցման քննաշրջանի ժամանակացույցի հաստատում:

Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 36 անդամներից 27-ը:

1. ԼՍԵՑԻՆ՝ Ֆակուլտետի 9 ամբիոնների վարիչները ներկայացրեցին ամբիոնների կողմից ատեստավորված, թվով 47 ասպիրանտներին ու հայցորդներին, նշելով, որ նրանց հետ կապված որևէ խնդիր չի առաջացել, բոլորն էլ աշխատանքները կատարում են ըստ սահմանված պլանի և գրաֆիկի:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Միաձայն քվեարկության արդյունքում հաստատվեց ասպիրանտներին և հայցորդներին ատեստավորելու ամբիոնների նիստերի որոշումները:

2. ԼՍԵՑԻՆ՝ Ֆակուլտետի դեկան և գիտխորհրդի նախագահ Ս. Աբրահամյանը ներկայացրեց 2014-2015 ուս. տարվա 1-ին կիսամյակի առկա և հեռակա ուսուցման քննաշրջանի ժամանակացույցը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաստատել 2014-2015 ուս. տարվա 1-ին կիսամյակի առկա և հեռակա ուսուցման քննաշրջանի ժամանակացույցը:

3. ԼՍԵՑԻՆ՝ Դեկանը հանձնարարեց ամբիոնների վարիչներին ուսումնասիրել սոց. հարցման նախնական արդյունքները և թերություններ հայտնաբերելու դեպքում տեղյակ պահել համապատասխան կառույցին՝ վերջնական տարբերակում այդ թերությունները բացառելու նպատակով, ինչպես նաև ցածր արդյունքները քննարկել դասախոսների հետ:

Գիտխորհրդի նախագահ՝

Ս. Աբրահամյան

Գիտխորհրդի քարտուղար՝

Գ. Մուրադյան

5 դեկտեմբերի 2014թ.